Հավելված N 2
ՀՀ Կառավարության
4 օգոստոսի 2022 թվականի N 1198-Ն
Ձևաչափ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍՈՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի
Սոթք, Կուտական, Տրետուք, Կախակն ազդակիր բնակավայրերում
Համայնքային մասհանումների ծախսման իրականացված ծրագրի մասին

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի 4.1-ին կետով սահմանված՝ համայնքային մասհանումների ծախսման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) անվանումը՝ Վարդենիս համայնքի «Կախակն բնակավայրի 320գծմ հատվածի ասֆալտապատման», «Տրետուք բնակավայրի 160գծմ հատվածի ասֆալտապատման և ամենագնացի ձեռքբերման», «Սոթք բնակավայրի 580գծմ ոռոգման ներքին ցանցի կառուցման», «Կուտական բնակավայրի 449գծմ ոռոգման արտաքին ցանցի կառուցման», «Ծովակ բնակավայրի խմելու ջրի ջրագծի և կապտաժի կառուցման» և «Սոթք բնակավայրի 471գծմ հատվածի ասֆալտապատման» աշխատանքներ։

Ա) ԾՐԱԳՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրի իրավական հիմքերը (նշել համայնքի ավագանու որոշման և ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի ամսաթիվը և համարը) Վարդենիս համայնքի ավագանու 2023թվականի դեկտեմբերի 28-ի N173 - Ա որոշում և ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի 2022թվականի սեպտեմբերի 1-ի N 1358 - Ն որոշում։

1. **Ծրագրի սկիզբը և ավարտը՝**

   1.1 Վարդենիս համայնքի Կախակն բնակավայրի 320գծմ հատվածի ասֆալտապատման աշխատանքների սկիզբ՝ 09.09.2024թ., ավարտ՝ 01.06.2025թ.

   1.2 Վարդենիս համայնքի Տրետուք բնակավայրի 160գծմ հատվածի ասֆալտապատման և ամենագնացի ձեռքբերման աշխատանքների սկիզբ՝ 09.09.2024թ., ավարտ՝ 01.06.2025թ.

   1.3 Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրի 580գծմ ոռոգման ներքին ցանցի կառուցման աշխատանքների սկիզբ՝ 09.09.2024թ., ավարտ 07.11.2024թ.

   1.4 Վարդենիս համայնքի Կուտական բնակավայրի 449գծմ ոռոգման արտաքին ցանցի կառուցման աշխատանքների սկիզբ՝ 09.09.2024թ., ավարտ 17.10.2024թ,

   1.5 Վարդենիս համայնքի Ծովակ բնակավայրի խմելու ջրի ջրագծի և կապտաժի կառուցման աշխատանքների սկիզբ՝ 03.10.2024թ., ավարտ 03.06.2025թ.

1.6 Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրի 471գծմ հատվածի ասֆալտապատման աշխատանքների սկիզբ՝ 24.10.2024թ., ավարտ 01.06.2025թ.

2. Ընդհանուր բյուջե 185,144,200 ՀՀ դրամ:

3. **Համայնքի առկա խնդիրները և նախնական վիճակի նկարագրությունը** (Ծրագրով նախատեսված ազդակիր բնակավայրի (համայնքի) սոցիալ-տնտեսական զարգացման առնչությամբ)

Վարդենիս համայնքը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզում, Սևանա լճի հարավ-արևելյան կողմում: Ծովի մակերևույթից միջին բարձրությունը կազմում է 2006-2008մ, կլիման խիստ է, ձմռան տևողությունը գրեթէ 6 ամիս, հունվարի միջին ջերմաստիճանը -8°C, տարեկան տեղումների քանակը կազմում է 400-500մմ: Վարդենիսը Հայաստան աշխարհի հնագույն բնակավայրերից է: Այն գտնվել է Մեծ Հայքի Սյունիք նահանգի Սոթք գավառի կազմում: Համայնքի նախկին անվանումներն են եղել Վասակաշենը, Ոսկեշենը, իսկ 1969թվականից անվանվել է Վարդենիս:

2021 թվականին համայնքների խոշորացմամբ Վարդենիսը խոշորացվել է իր կազմում ընդգրկելով՝ ք. Վարդենիս, Ազատ, Ախպրաձոր, Ակունք, Այրք, Ավազան, Արեգունի, Արփունք, Գեղամաբակ, Գեղամասր, Գեղաքար, Դարանակ, Լճավան, Լուսակունք, Խաչաղբյուր, Ծովակ, Կախակն, Կարճաղբյուր, Կութ, Կուտական, Մաքենիս, Մեծ Մասրիկ, Ներքին Շորժա, Նորաբակ, Նորակերտ, Շատջրեք, Շատվան, Ջաղացաձոր, Սոթք, Վաննան, Վերին Շորժա, Տորֆավան, Տրետուք, Փամբակ, Փոքր Մասրիկ գյուղերը:

Վարդենիս համայնքն ունի 40,030 բնակիչ: Վարդենիս համայնքի վարչական տարածքում «Գեոպրոմայնինգ գոլդ» ՍՊԸ կողմից շահագործվում է Սոթքի Ոսկու Հանքը: 2021թվականի ընթացքում ռոյալթի վճարած կազմակերպությունների ազդակիր բնակավայրերն են Վարդենիս համայնքի Սոթք, Կուտական, Կախակն և Տրետուք բնակավայրերը:

- ✓ Կախակն բնակավայրի բնակիչները հիմնականում զբաղվում են անասնապահությամբ և հողագործությամբ: Բնակիչները իրենց առօրյա կարիքները բավարարելու առաջնային ապրանքները գնելու համար հիմնականում կապը պահում են մոտակա բնակավայրի Մեծ Մասրիկի հետ: Մասհանումների ծախսման ծրագրով իրականացվում է Կախակն բնակավայրի ներքին թաղամասերի ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ, որոնք գտնվում են անբարեկարգ վիճակում, ամբողջովին քանդված են, դժվար երթևեկելի են հատկապես փոքր մարդատար ավտոմեքենաների համար, իսկ ձմռան ամիսներին անբարեկարգ ճանապարհներն ավելի են բարդացնում ձնահեռացման աշխատանքները և շատ հաճախ ճանապարհները դառնում են ոչ երթևեկելի: Երեխաների համար ձմռան ամիսներին դպրոց գնալն իսկական փորձությունների հաղթահարման ժամանակաշրջան են դառնում:

- ✓ Վարդենիս համայնքի Կուտական բնակավայրը բարձրլեռնային է, հանդիսանում է «Գեոպրոմայնինգ գոլդ» ՍՊԸ-ի ազդակիր բնակավայր: Գյուղը ունի դպրոց, որտեղ սովորում են 30 աշակերտ, ինչպես նաև գործում է բուժկետ, վարչական շենք: Կուտական բնակավայրի բնակիչները հիմնականում զբաղվում են անասնապահությամբ և հողագործությամբ: Բնակավայրի հողատարածքները հարմար են ցորեն և գարի ցանելու համար: Սակայն բնակիչները հանդիպում են դժվարությունների՝ կապված հողատարածքների ոռոգման հետ: Բնակավայրում գոյություն ունեցող ոռոգման համակարգը բավարարում է միայն 70 հա տարածք ոռոգելու համար: Հողատարածքների մեծ մասն մնում է առանց ոռոգման: Խնդրին լուծում տալու համար առաջարկվել է գոյություն ունեցող արտաքին ոռոգման ցանցին ավելացնել ևս 449 գծամետր, որի միջոցով կոռոգվի բնակավայրին պատկանող ևս 100 հա մշակելի հողատարածք: Քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշատակիցների կողմից տարված ուսումնասիրություններից պարզվել է, որ աշխատանքները պետք է իրականացնել 60սմ ցեմետ բետոնյա վաքերով:
- ✓ Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրը բարձրլեռնային է, սահմանամերձ, հանդիսանում է «Գեոպրոմայնինգ գոլդ» ՍՊԸ-ի ազդակիր բնակավայր: Գյուղը ունի դպրոց, մանկապարտեզ, նախակրթարան, ինչպես նաև գործում է բուժկետ, վարչական շենք: Սոթք բնակավայրը գյուղատնտեսական համայնք է, բնակչության հիմնական զբաղմունքն է հողագործությունը և անասնապահությունը, որն էլ ապահովում է նրանց եկամտի հիմնական աղբյուրը: Համայնքաբնակները հողագործության աշխատանքներ իրականացնելիս հանդիպում են դժվարությունների՝ կապված ոռոգման հետ: Ոռոգման համակարգում առկա խնդիրները բացասական ազդեցություն են թողնում բերքատվության ծավալների, բերքի որակի վրա: Ծրագրի իրականացմամբ նախատեսվում է կառուցել 580 գծամետր ոռոգման ջրագծի ներքին ցանց:

  Սոթք բնակավայրի կենտրոնական փողոցը հողային է, ողջ տարվա ընթացքում ցեխապատ է, դժվարություններ է առաջացնում ինչպես երթևեկության, այնպես էլ հետիոտների համար: Այս փողոցին են հարում Սոթքի հանրակրթական դպրոցը, մանկապարտեզը, վարչական շենքը: Ծրագրի իրականացմամբ նախատեսվում է ասֆալտապատել 471 գծամետր երկարությամբ, 6 մետր լայնությամբ ճանապարհը:
- ✓ Տրետուք բնակավայրի բնակիչները հիմնականում զբաղվում են անասնապահությամբ և հողագործությամբ: Բնակիչները իրենց առօրյա կարիքները բավարարելու առաջնային ապրանքները գնելու համար հիմնականում կապը պահում են մոտակա բնակավայրի՝ Մեծ Մասրիկի հետ: Բնակավայրի կենտրոնական ճանապարհը, որը կապում է Մեծ Մասրիկ – Տրետուք - Կուտական բնակավայրերը ասֆալտապատված է, սակայն գյուղամիջյան կարևոր նշանակության ճանապարհը, որը կապում

է գյուղի մի մասը կենտրոնական ճանապարհին գտնվում է անբարեկարգ վիճակում՝ ամբողջովին քանդված է, դժվար երթևեկելի է հատկապես փոքր մարդատար ավտոմեքենաների համար, իսկ ձմռան ամիսներին անբարեկարգ ճանապարհներն ավելի են բարդացնում ձնահեռացման աշխատանքները և շատ հաճախ ճանապարհները դառնում են ոչ երթևեկելի: Երեխաների համար ձմռան ամիսները իսկական փորձություններ են դառնում դպրոց և մանկապարտեզ գնալը: Խնդրին լուծում տալու համար առաջարկվել է բնակավայրի ամենաբանուկ և վատթարագույն թաղամասի ճանապարհի 160 մետր ասֆալտապատում՝ ջրահեռացմամբ, գծանշմամբ և կահավորմամբ:

Բնակավայրի կարիքների համար նախատեսվել է նաև ձեռք բերել ամենագնաց (կիսաբեռնատար) բարձր մեքենա, որը մեծ անհրաժեշտություն է եղանակային ցանկացած պայմաններում: Ձմռան ամիսներին աներթևեկելի է դառնում բնակավայրի տարբեր թաղամասեր այցելություններն: Ձնաբքերի պատճառով բնակավայրը օրեր շարունակ կարող է կտրվել այլ բնակավայրերից, և բնակիչները չեն կարողանում իրենց անհրաժեշտ ամենօրյա կարիքները բավարարել: Վարչական ղեկավարի համար առավել դժվար է այդ օրերին իր բնակիչների կարիքների համար Վարդենիս գնալը և բնակիչների խնդիրները բարձրաձայնելը: Խնդիր է առաջանում նաև գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնելու ժամանակ, քանի որ մշակելի հողատարածքներ բարձրանալը այն էլ անձրևային եղանակներին գրեթե անհնար է: Խնդրին լուծում տալու համար առաջարկվել է ձեռք բերել ամենագնաց բարձր մեքենա, որը կծառայի ամռան ամիսներին մշակելի հողատարածքներ գնալու համար, իսկ ձմռան ամիսներին թաղամասերը միմյանց կապելու և երեխաներին դպրոց և մանկապարտեզ տանելու համար:

- ✓ Վարդենիս համայնքի Ծովակ, Լուսակունք, Վանեվան և Տորֆավան բնակավայրերը բարձր լեռնային են: Բնակավայրերն ունեն դպրոցներ, գործում են վարչական շենքեր: Չորս բնակավայրի բնակիչները հիմնականում զբաղվում են անասնապահությամբ և հողագործությամբ: Բնակավայրերում առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնց լուծման համար իրականացվում են բոլոր անհրաժեշտ գործողությունները: Այդ հիմնախնդիրներից շատերը լուծում են սուբվենցիոն ծրագրերի միջոցով, սակայն առկա են մի շարք առաջնային անհարժեշտ կարիքներ, որոնք չենք կարող իրականացնել սուբվենցիոն ծրագրերի միջոցով: Վարդենիս համայնքի Ծովակ, Լուսակունք, Վանեվան և Տորֆավան բնակավայրերը ունեն խմելու և ոռոգման ջրի կենսական նշանակության խնդիր: Այս բնակավայրերը սպասարկող խմելու ջրագծի կապտաժը և դրանից դուրս եկող ջրագծերը կառուցվել են 1956 թվականին, երբևէ չեն վերակառուցվել: Կապտաժը կառուցվել է ջրի ակունքի վրա, տարիների շահագործման

արդունքում պատերը քանդվել են, ինչը առաջացնում է ջրի կորուստ: Ջրի կորուստը հնարավորինս նվազեցնելու համար տարբեր, ոչ շինարարական միջոցներով փորձել ենք փակել քանդված պատերը, սակայն դրանք ինչպես արդյունավետ չեն, այնպես էլ ոչ սանիտարահիգիենիկ են: Կապտաժից դուրս եկող ջրի խողովակները երկաթյա են, շուրջ 68 տարիների շահագործման արդյունքում ամբողջովին էրոզացվել, վնասվել են, արտաքին միջավայրից քարերի ներհոսքի պատճառով խողովակները տեղ-տեղ նաև փակվել են և խոչընդոտում են ջրի հոսքին: Նշված կապտաժի վերակառուցման և խողովակների փոխարինման արդյունքում խմելու ջուր կստանան Ծովակ, Վանեվան, Լուսակունք, Տորֆավան բնակավայրերի շուրջ 5067 բնակիչներ, ընդհանուր 1283 տնային տնտեսություն և Արցախից բռնի տեղահանված ու այդ բնակավայրերում բնակություն հաստատած 71 անձ: 85քմ մակերեսով և 1000 խմ ծավալով կապտաժի վերակառուցումը Ծովակ, Լուսկունք և Վանեվան, Տորֆավան բնակավայրերին ոչ միայն կապահովվի խմելու ջրով, այլ ոռոգման ջրով: Քանի որ կապտաժի ծավալը մեծ է և ջրի խնայողության համար երեկոյան ժամը 23:00-ից հետո կապտաժի բաժանարարից ջրի հոսքը անջատվում է, գիշերային ժամերին ջրի կուտակման և խնայողության համար, առավոտյան արդեն հավաքված ջրով հնարավոր է ապահովել ինչպես խմելու ջրի անհրաժեշտ քանակը, այնպես էլ ջրի հոսք ապահովել ոռոգման համակարգով: Կապտաժի վերակառուցման արդյունքում կստացվի, որ Ծովակ, Լուսակունք, Վանեվան և Տորֆավան բնակավայրերի 1283 տնային տնտեսություններ կապահովվեն խմելու և 730 տնային տնտեսություններ կապահովվեն ոռոգման ջրով: Խնդրին լուծում տալու համար առաջարկվում է վերանորոգել Ծովակ բնակավայրի խմելու ջրի կապտաժը:

4. **Ծրագրի նպատակ**

Բարձրացնել Վարդենիս համայնքի բնակիչների կյանքի որակը:

Ծրագրով հաստատված ուղղակի արդյունքները՝ խմելու և ոռոգման ջրերի ջրամատակարարման համակարգերի հիմնանորոգում և ճանապարհների ասֆալտապատում:

Վերջնական ակնկալվող արդյունքները՝ վերանորոգված ճանապարհներ և հասանելի խմելու և ոռոգման ջրեր:

5. **Ծրագրի շահառուները՝** (նկարագրել շահառուների խումբը՝ ըստ տարիքային, մասնագիտական, կարիքավորության կամ այլ գործոնների և նախատեսվող թիվը)

Ծրագրի ուղղակի շահառուներն են համարվում Վարդենիս համայնքի Սոթք, Կուտական, Լուսակունք, Վաննան, Ծովակ, տորֆավան, Տրետուք և Կախակն բնակավայրերի 3052 բնակիչներ/1144 տնային տնտեսություններ:

6. **Ծրագրի շրջանակում նախատեսված միջոցառումները և դրանց ընտրության հիմնավորումները՝** (նշել Ծրագրի, ինչպես նաև ծրագրում ընդգրկված միջոցառումների ընտրման հիմնական պատճառները)

Նախատեսվում է Վարդենիս համայնքի բնակավայրում իրականացնել ասֆալտապատման, խմելու և ոռոգման ջրամատակարարման համակարգերի անցկացման աշխատանքներ: Ծրագրերն ընտրվել են բնակավայրերի համաչափ զարգացման նպատակով՝ բնակիչների առաջնային կարիքները հաշվի առնելով:

Բ) ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

7. **Ծրագրի իրականացման փաստացի արժեքը՝** 185,144,200 ՀՀ դրամ է, որից 159,711,952 ՀՀ դրամ՝ շինարարական աշխատանքների արժեք, 5,760,000 ՀՀ դրամ՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման արժեք, 1,675,000 ՀՀ դրամ՝ տեխնիկական հսկողության արժեք, 1,197,248 դրամ՝ հեղինակային հսկողության արժեք և 16,800,000 ՀՀ դրամ՝ ամենագնացի ձեռքբերման արժեք: Փաստացի ծախսվելու է 185,144,200 դրամ:
8. **Ծրագրի փաստացի շահառուները՝** (նշել փաստացի շահառուների խումբը և թիվը ամբողջ ծրագրի ընթացքում)
Ծրագրի ուղղակի շահառուներն են համարվում Վարդենիս համայնքի Սոթք, Կուտական, Լուսակունք, Վանեվան, Ծովակ, Տորֆավան, Տրետուք և Կախակն բնակավայրերի 3052 բնակիչներ / 1144 տնային տնտեսություններ:
9. **Փաստացի իրականացված միջոցառումները՝** (նշել փաստացի իրականացված միջոցառումները՝ յուրաքանչյուրի մասով կատարված աշխատանքների, նկարագրությամբ)
2024թվականին մասհանումների ծախսման ծրագրով Վարդենիս համայնքի բնակավայրերում իրականացվել են առաջնային անհրաժեշտության շինարարական աշխատանքներ, որի արդյունքում լուծվել են բնակչության համար առավել կարևոր որոշակի խնդիրներ: Հաշվի առնելով ազդակիր բնակավայրերի համաչափ զարգացումը, մասհանումների ծրագրով նախատեսված գումարը բաշխվել է հետևյալ բնակավայրերի միջև՝
9.1 Վարդենիս համայնքի Տրետուք բնակավայրի 160գծմ ճանապարհահատվածի ասֆալտապատում և ամենագնացի ձեռքբերում - 29,324,856 ՀՀ դրամ,
9.2 Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրի 471գծմ ճանապարհի ասֆալտապատում - 49,433,592 ՀՀ դրամ,
9.3 Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրի 580 գծմ ոռոգման ներքին ցանցի կառուցում - 29,010,776 ՀՀ դրամ,
9.4 Վարդենիս համայնքի Կուտական բնակավայրի 449գծմ ոռոգման արտաքին ցանցի կառուցում - 16,762,192 ՀՀ դրամ,
9.5 Վարդենիս համայնքի Կախակն բնակավայրի 320գծմ ճանապարհահատվածի ասֆալտապատում - 29,967,702 ՀՀ դրամ,
9.6 Վարդենիս համայնքի Ծովակ, Լուսակունք, Վանեվան, Տորֆավան բնակավայրերի խմելու ջրի ջրագծերի և կապտաժի վերանորոգման ծրագրի ընդհանուր արժեքից՝ 68.034.916 ՀՀ դրամից 30,645,082 ՀՀ դրամը հատկացվել է 2024թ-ի մասհանումների ծախսման ծրագրով նախատեսված գումարից, իսկ մնացյալ մասը՝ 37,389,834 ՀՀ դրամը հատկացվելու է 2025թ-ի Վարդենիս համայնքի բյուջեից:

10. **Ծրագրի իրականացնողները և աջակցողները** (թվարկել Ծրագրի յուրաքանչյուր միջոցառման մասով իրականացման մասնակիցների (ՏԻՄ, մասնավոր ընկերություն, ոչ առևտրային կազմակերպություն, միջազգային գործընկեր կամ հասարակական կազմակերպություն) անվանումները:

Ծրագիրը իրականացվել է Վարդենիս համայնքի կողմից, շինարարական աշխատանքները իրականացրել են՝ Կախակն բնակավայր՝ «Արամ և Բագրատ» ՍՊԸ, Կուտական բնակավայրում «Եղեմ Գրուպ» ՍՊԸ, Ծովակ բնակավայրում «Կիր Քար» ՍՊԸ, Տրետուք բնակավայրում «Կառույց» Ա/Կ, Սոթք բնակավայրում «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ, Սոթք բնակավայրում «Սպիտակ բազե» ՍՊԸ:

Բնակավայրերում տեխնիկական հսկողություններ իրականացրել են՝ «Վարդ-1» ՍՊԸ-ն, «Տեխնո Շին» ՍՊԸ-ն, «Շին Քոնստրուկտ» ՍՊԸ-ն և «Բուլգարո» ՍՊԸ-ն: Նախագծանախահաշվային փաստաթղթերը և հեղինակային հսկողություններն իրականացրել են «Արմ Դոր Ստրոյ» ՍՊԸ-ն և «ԷՅՉ-Ի-ԷՅ» ՍՊԸ-ն:

11. **Հաշվետվության հրապարակման ամսաթիվ՝ 28.02.2025 թվական**

Վարդենիս համայնքի ղեկավար **Ա. Խաչատրյան**